ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2014 թվականի N 352-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 22-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի հունվարի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման մարզային հանձնաժողով ստեղծելու մասին>> N 22-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) N 1 հավելվածը՝ (հանձնաժողովի կազմը) շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2) 4-րդ կետի՝ <<*Ալբերտ Ղազարյանի*>> բառերը փոխարինել <<*Կարեն Մարգարյանի*>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի սեպտեմբերի 16
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 352-Ա ՈՐՈՇՄԱՆ

<<Հավելված N 1

ՀՀ Կոտայքի մարզպետի

,,27,, հունվարի 2012թ.

N 22-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ***Կ. Մարգարյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

2. ***Գ. Գրիգորյան*** - հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ (համաձայնությամբ),

3. ***Վ. Թովմասյան*** - հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ,

4. ***Ա. Խաչատրյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ,

5. ***Գ. Մարտիրոսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

6. ***Մ. Պետրոսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ,

7. ***Ռ. Ներսեսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ,

8. ***Ա. Ասատրյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ,

9. ***Ա. Հակոբյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ:>>: